# ԳԻՐՔ-ՏԵՏՐ 2



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ

Երևան 2009

# ԱՌԱՋԱԲԱՆ

Գիրք-տետր 2-ը նախատեսված է կրտսեր դպրոցականների համար: Այստեղ պահպանված են կրտսեր դպրոցականներին ուղղված ուսումնական նյութերին ներկայացվող մանկավարժական և մեթոդական ժամանակակից կարևոր պահանջներ: Գիրք-տետր 2-ը նկարազարդ է, գունավոր, առաջադրանքները հետաքրքրաշարժ են և բազմազան՝ միտված բավարարելու տարբեր պատրաստվածություն ունեցող սովորողների լեզվական պահանջները:

Գիրք-տետր 2-ը նպատակաուղղված է տարրական դպրոցի մայրենի լեզվի ծրագրով նախատեսված մի շարք լեզվական գիտելիքներ յուրացնելուն և ամրակայելուն, ինչպես նաև սովորողների մեջ լեզվական անհրաժեշտ կարողություններ և հմտություններ զարգացնելուն: Գիրք-տետրում զետեղված առաջադրանքների զգալի մասը խաղային տարրեր է պարունակում: Դրանք կօգնեն երեխաներին ավելի հեշտ և հաճույքով յուրացնելու ուղղագրական որոշ կանոններ, հոմանիշ և հականիշ բառերի իմաստները, բառի, բառակապակցության և նախադասության կազմության առանձնահատկությունները: Կարևոր է առաջադրանքները դիտարկել նաև ճանաչողական, զարգացնող-դաստիարակչական տեսանկյուններից և դրանց կատարման ժամանակ աշխատանքներ տանել այդ ուղղությամբ:

Գիրք-տետր 2-ի առաջադրանքները կարելի է հանձնարարել երեխաներին իբրև տնային աշխատանք, դասարանական անհատական աշխատանք, երկարացված օրվա պարապմունքների ընթացքում՝ իբրև հետաքրքիր ժամանց: Գիրք-տետրում երեխաները կարող են աշխատել ինքնուրույն, զույգերով կամ ենթախմբերով՝ անհրաժեշտության դեպքում դիմելով ուսուցչի կամ ծնողի օգնությանը:

Գիրք-տետր 2-ի առաջադրանքների կատարումը կնպաստի սովորողների գործուն բառապաշարի հարստացմանը:

Ներկայացվող բառացանկն ընդգրկում է գիրք-տետրի հիմնական բառապաշարը:

1. Այբբենական կարգով միացրու՛ տառերը, անվանի՛ր և ներկի՛ր ստացված պատկերը:




2. Տրված բառերը գծով միացրու՛ համապատասխան պատկերներին:







միասնություն    խաղաղություն    օգնություն

3. Ո՞ր բառերն են կազմվել *ջրաշուշան* բառի տառերով: Գծով միացրո՛ւ:




4. *Ծառատունկ* բառի տառերով կազմի՛ր 5 նոր բառ և գրի՛ր:

ծառատունկ

| | | |
|---|---|---|
| առակ | ______ | ______ |
| | | |

5. Շարունակի՛ր բառաշղթան՝ գրելով առարկա ցույց տվող բառեր:

շրջան → նարինջ → ______ → ______ →

______ → ______ → ______ → ______

6. **Գրի՛ր բառեր, որոնց ձայնավորները կրկնվում են: Քեզ կօգնեն նկարները:**

| ա | ի | օ(ո) |
| --- | --- | --- |
| նամակ | գինի | օրորոց |



7. **Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:**



աչք/աչքեր

արկղ/արկղեր

թռչուն/թռչուններ

կարտոֆիլ/կարտոֆիլներ

մուկ/մկներ

բանալի/բանալիներ

8. Ծրջանակի մեջ վերցրո՛ւ միայն հոգնակի թվով բառերը:



9. Տրված խմբին չհամապատասխանող բառը նշի՛ր X-ով: Գրի՛ր ճիշտ պատասխանը:

◯ ոչխարների խումբ  հոտ

◯ ձկների խումբ  վտառ

◯ թռչունների խումբ  երամ

◯ ձիերի խումբ  երամակ

◯ գայլերի և շների խումբ  նախիր

◯ մեղուների խումբ  պարս

_______________________________________________